

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԴԱՐԱ- ԴԱՐՁԵՐՈՒ ՏՕՆԸ

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՄԷՉ

(Հեռագիր ակտիսանի)

Յուլիս 20-ին Ս. Կարապետի մէջ
ի ներկայութեան զանազան հա-
նանդներէ եկած պատկառելի բազ-
մութեան, շքեղապէս տօնուեցաւ
Հայ դրերու գիւտի 4500 և Հայկ.
տպագրութեան 400 ամեայ դա-
րագարձերը:

— Յուլիս 19ին գիշեր Աւանց գիւ-
ղի մէջ ցաւալի արկածով մը սպանուե-
ցաւ Նօշաղա Միսաքեան երիտասարդ
մը:

— Յուլիս 21 ի ցօրեկ Նորաշէնի եկե-
ղեցու քով փողոցի մէջ գնտակահար
կրկայ անծանօթի մը կողմէ գող Մէլօ
անուն անձ մը որու համար կը խօսուի
թէ դրամաշորթութեամբ գողութեամբ
և կեղծ դրամներու գործածութեամբ
կգրադէր:

Չարագործի այս կերպ վախճանը
գոհունակութիւն պատճառեց ընդհա-
նուր ժողովուրդին:

Աննուամսի Անդամները. — Նա-
հանգային ընդհանուր ժողովը որ միտի-
այն թուրք անդամներէն կազմւած է իր
աշխատանքները աւարտեց Եջ. Յուլիս
25-ին: Վերջին շիտի մէջ ըստնահան-
գային օրինաց արամադրութեան ընտ-
րեց 4 մնայուն և 4 օգնական անդամ-
ներէ բաղկացած Աննուաման մը: Մնայուն
4 անդամները 1000-ական զրշ. ամ-